«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «Ընթերցանությունը ակտիվ գործընթաց տարրական դասարաններում»

ԱՌԱՐԿԱ՝ Դասվար
ՀԵՂԻՆԱԿ՝ Հովհաննիսյան Վերժինե
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ՝ ՀՀ Գեղարքունիք ք. Սևանի
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Մեսրոպ Մաշտոցի անվան № 1 հիմնական դպրոց

Բովանդակություն

Ներածություն 3

7. Համատեղ ընթերցանություն 8

առաջին ընթերցոիմ 8

Ստորև ներկայացնում ենք մայրենիի դասեր 9

Եզրակացություն 13

Օգտագործված գրականության ցանկ 14

Ներածություն

Ընթերցանությունը տարրական դասարաններում աշակերտների մտավոր զարգացման ու բարոյական դաստիարակության ամենակարևոր ու անփոխարինելի միջոցներից մեկն է:

Հայտնի է, որ ընթերցարաններում տրված նյութերի դասարանական ընթերցումը կամ մշակումը կատարվում է տարբեր մեթոդներով տարրական դասարաններում բացատրական ընթերցանության, իսկ ուսուցման միջին օղակում՝ գրական ընթերցանության մեթոդով: Դրանց խնդիրներն ու նպատակները միանգամայն այլ են, դրա համար էլ նյութի մշակման ընթացքում առաջադրվող պահանջներն էլ այլ են լինում: Հենց այդ պատճառով էլ միևնույն «Գիքոր» պատմվածքը այլ ձևով կմշակվի բացատրական ընթերցանության և բոլորովին այլ՝ գրական ընթերցանության մեթոդով անցնելիս: Այդ տարբերությունները պայմանավորված են ոչ միայն երեխաների տարիքային առանձնահատկություններով ու ընդհանուր զարգացման մակարդակով, որոնք, անկասկած, նույնպես որոշակի դեր են խաղում նյութի մատուցման ձևերի ընտրության գործում, այլև ծրագրային պահանջներով, որոնք ուսման տարբեր օղակներում միանգամայն տարբեր խնդիրներ ու նպատակներ են դնում մայրենի լեզվի դասընթացի այս կարևոր բաժնի առջև:

2. Ընթերցանությունը երեխային հնարավորություն է ընձեռնում հարստացնել ճանաչողական գործունեության սեփական փորձը, զարգացնել տրամաբանական հաղորդակցման ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունները: Իսկ հասկանալով ընթերցաությունն ակտիվացնում է մտածական գործընթացները և կարևոր նախապայման դառնում երեխաների արդյունավետ ուսուցման համար:

Գրականությունն այսօր և որպես հասարակության հոգեբարոյական կյանքի գոյության փաստ և որպես դպրոցական առարկայական բարոյական հիմքն ու մաքուր ակունքն է, որը սնում է մարդկանց հոգևոր աշխարհը: Բարոյական համոզմունքները բուռն կերպով են ձևավորում մանկական տարիքում: Սա նշանակում է , որ հատկապես դպրոցում պետք է արթնացնել, իսկ հետո նաև ձևավորել ընթերցանության նկատմամբ երեխաների հետաքրքրությունն ու սերը զարգացնել գեղեցիկի գրական խոսքի խորության ընկալման կարողությունը և դրա բարոյական ներգործության ուժը:

Ընթերցանության դասաժամերին երեխաները պետք է սովորեն լիակատար ընկալել գրական տեքստը: Այլ խոսքով նրանք պետք է կարողանան երևակայության

միջոցով ներթափանցել հեղինակի «նկարած» կյանք ապրել այն որպես իրողությունապրումակցել հերոսներին այդ ամենը համեմատել իրենց կյանքի և զգացմունքների հետ և հասկանալ հեղինակի գաղափարները:

Հարց է ծագում դասի ընթաքում ինչպե՞ս աշխատել, որպեսզի սովորողները դպրոցից հետո ևս ցա նկություն ունենան ընթերցել հայ և համաշխարհային գրականության հրաշալի ստեղծագործությունները որոնց դաստիարակչական նշանակությունն անէրբա է:

Ա. Ղարիբյանը ժամանակին ասել է. «Բացատրական ընթերցանության հիմնական նպատակներից է կարդալ սովորեցնելը, որովհետև կարդալու ուսուցումը լեզվի ուսուցման ամենահիմնական և պատասխանատու բաժինն է: Թե՛ լեզվի

մյուս բաժինների և թե՛ միջնակարգի բոլոր այլ առարկաների յուրացումն ապահովվում է աշակերտի կարդալու հմտությամբ: Անհնարին է ծանոթանալ որևէ գիտության հիմունքների, առավել ևս դառնալ ժամանակակից կուլտուրայի պահանջների բարձրության վրա կանգնած մարդ, եթե կարդալ չգիտես: Շատ վաղ անցյալում

ուսուցման միակ առարկան կարդալու ուսուցումն էր: Հետագայում, երբ զարգացան առանձին գիտությունները, երբ ստեղծվեց ուսուցման դպրոցական համակարգն իր բազմազան առարկաներով, կարդալը դարձավ այլ գիտություններին

տիրապետելու, կուլտուրայի և տեխնիկայի բոլոր նվաճումները յուրացնելու ամենահիմնական միջոցը: Կարդալու ուսուցման որակից է կախված մյուս առարկաների ուսուցման հաջողությունը, իսկ կարդալու հմտության հիմնական որակը որոշվում է կարդալու ուսուցմամբ տարրական դասարաններում»:

Նպատակ

3. Մայրենի լեզվի տարրական դասընթացի նպատակն է երեխաների ուսումնառության այս առաջին օղակում իրականացնել հետևյալ խնդիրներն ու ու պահանջները, որոնք հիմնականում կապվում են դասարանական ընթերցանության հետ: 1) Երեխաների մեջ մշակել ու զարգացնել կարդալու տեխնիկան՝ իր որակական բոլոր հիմնական հատկանիշներով, 2) գործնական կերպով սովորեցնել մայրենի լեզուն՝ հարստացնել երեխաների բառապաշարը, մշակել ու զարգացնել երեխաների լեզվական կարողությունները,

3)աշխարհաճանաչողական տարրական տեղեկություններ տալ շրջապատի բնական ու հասարակական երևույթների, մարդկանց ու նրանց աշխատանքային գործունեության մասին և 4) իրականացնել երեխաների բարոյական, գեղագիտական ու գաղափարական դաստիարակության ուղղությամբ դպրոցի առջև դրված

խնդիրները:

Խնդիրներ

Ընթերցանության հիմնական խնդիրներից մեկն էլ երեխաների մտավոր զարգացումն է, նրանց նոր գիտելիքների ու տեղեկությունների հաղորդումը, որոնք ոչ միայն պետք է նպաստեն նրանց կրթական մակարդակի բարձրացմանը, այլև երեխաներին պետք է նախապատրաստեն ավելի բարձր դասարաններում ավելի բարձր ուսումնական տարբեր առարկաներից համակարգված դասընթացների ուսումնասիրությանն անցնելուն: Ինչպես ռուս մեփոդիստ Դ.Ի.Տիխոմիրովն է նկատել՝ «սկզբնական աստիճանում լեզվի ուսուցումն իրենով փոխարինում է ամբողջ գիտությանը, բոլոր առանձին ուսումնական առարկաներին»: Եվ դա պատահական չէ, որովհետև բոլոր նոր տեղեկությունները երեխաներին հաղորդվում են լեզվի միջոցով և լեզվի մեջ: Այն ամենը, ինչ երեխան մտապահում է, մտապահում է լեզվական ձևի մեջ, լեզվական նյութի հիմքի վրա, որովհետև ինչպիսի մտքեր էլ որ ծագեն մարդու ուղեղում և երբ էլ որ դրանք ծագելիս լինեն, կարող են ծագել ու գոյություն ունենալ միայն լեզվական ձևով:

4. Ընթերցանության նկատմամբ հետաքրքրասիրություն աշակերտների մեջ պետք է առաջացնել դեռևս առաջին դասարանից: Բանն այն է, որ մանուկներին գրքին կապելն առավել դյուրին է, քան երիտասարդներին: Վերջիններս, որպես անհատներ, արդեն ձևավորված են և ունեն իրենց նախասիրությունները: Այդ իսկ պատճառով այբբենարանն ավարտելուց հետո անգամ գրաճանաչության ընթացքում, պետք է փոքրիկների համար կարդալ հետաքրքիր հեքիաթներ և իրենց նույնպես դրդել՝ դրանք կարդալ, հետաքրքրություն առաջացնել կարդալու նկատմամբ: Դա դասվարի գլխավոր խնդիրն է:

Գրաճանաչության ուսուցման շրջանում ձևավորվում է կարդալու նախնական կարողությանը: Ցավոք, այդ շրջանում առավել հոգ է տարվում տառերի ծանոթացմանը, քան կարդալու տեխնիկայի մշակմանը, մինչդեռ հենց այդ շրջանում է սկիզբ դրվում կարդալու տեխնիկայի մշակմանը: Ուստի պետք է հավասարաչափ հոգ տանել թե՛ տառերին ծանոթանալու և թե՛ կարդալու տեխնիկային տիրապետել տալու մասին:

Ուսուցիչներից ոմանք կարծում են, որ կարդալ չսիրելու պատճառներից է նաև դասի ժամանակ աշակերտներին առաջինը կարդալու հնարավորությունից զրկելը: Երեխաները միշտ առաջին ընթերցումը լսում են իրենց ուսուցիչի կողմից կամ պատմելով (կրտսեր դպրոցականը): «Եվ ժամանակի ընթացքում նրանց մոտ ձևավորվում է կարդացածը չհասկանալու կայուն սինդրոմը»: Եվ երբ որևէ ուսուցիչ

ինչ-որ պատճառով չի հասցնում դասը պատմել, երեխաները հանգիստ պատճառաբանում են, որ իրենք չեն հասկացել: Սիգուցե կարդացել են, բայց արդեն նրանց մեջ ձևավորվել է այն դիրքորոշումը, որ ինքնուրույն կարդալով՝ նրանք չեն կարող որևէ բան հասկանալ ու մեկնաբանել: Իսկ այս զգացումն ազդում է ոչ միայն կարդալու, այլև սովորելու, մտածելու, ինքնավստահության կարողությունների ձևավորման վրա:

5. Առաջին հերթին աշակերտներին կարդալ սովորեցնելու համար պետք է առաջարկել ոչ միայն դասագրքի նյութերը, այլև՝ անծանոթ տեքստեր: Եվ դա պետք է անեն բոլոր ուսուցիչները: Շատերը կարծում են, որ կարդալ սովորեցնելը մայրենիի, հայոց լեզվի ուսուցչի խնդիրն է միայն: Եվ հաճախ են մեղադրում հայոց լեզվի ուսուցչին՝ երեխաներին կարդալ չսովորեցնելու համար: : Բայց դա ճիշտ չէ: Կարդալու կարողության ձևավորմանը և ճիշտ կարդալուն պետք է հետևեն տվյալ դասարանում դասավանդող բոլոր ոաուցչները: Այնինչ, շատերի կարծիքով՝ դա իրենց առարկայի խնդիրը չէ, և ավելորդ ժամանակ չեն վատնում դրա վրա: Փաստ է, որ ընթերցողական հմտություններ ունեցող աշակերտի ձևավորման արդյունավետության բարձրացումը նպաստում է առարկայական ծրագրերի կատարմանը: Հարկավոր է նախ սովորեցնել հաղթահարել ընթերցանության շատ բնական բարդությունները:

Աշակերտն առաջին հերթին պետք է հոգեբանորեն պատրաստ լինի և իր մեջ ձևավորի այն համոզմունքը, որ ինքը նոր նյութը՝ հեշտ, թե դժվար, կարող է կարդալ: Ըստ Ձ. Գյուլամիրյանի՝աշակերտը կարդալ սովորում է ոչ թե նույն նյութը բազմակի ընթերցելով, այլ անծանոթ նյութերի անընդհատ ընթերցմամբ:

Որպեսզի աշակերտ ընթերցողը ցանկանա և կարողանա լսել հեղինակային տեքստը, հասկանա միտքը, նա պետք է սովորի մտածել գրքի մասին, ընդունի այն սիրով ու հասկանալով գնահատի իր համար լավն ու վատը:

Գիրքը մեծ դեր է խաղում երեխայի հոգևոր կյանքում, մանավանդ այն ժամանակ, երբ նա տիրապետում է կարդալու տեխնիկային, և ինքն է սկսում կարդալ: Ընթերցանությունը երեխայի համար դառնում է մի պատուհան, որի միջով նա տեսնում ու ճանաչում է աշխարհն ու ինքն իրեն»ն»:

«Մեր դպրոցում չի իրականացվում §կարդալու կուլտուրա¦ ապահովող որևէ ուսուցում (խոսքը չի վերաբերում առանձին առարկայի): Ուսուցիչները չեն կիրառում կարդալու հմտությունները զարգացնող մեթոդներ: Հատուկենտ ուսուցիչներ են կիրառում աշակերտներին կարդալ սովորեցնելու դասեր՝նրանց հետ համատեղ ընթերցելու և ընթերցածը մեկնաբանելու վրա հիմնված ուսուցում:

Այժմ մշակվել են ոչ ավանդական, ժամանակակից բազմաթիվ հնարներ, որոնց միջոցով աշակերտներն ավելի հաճախ են ընթերցում ինքնուրույն կամ խմբովին: Սրանք նպաստում են կարդալու գործընթացի արդյունավետությանը: «Չափազանց կարևորվում է ուսուցման նպատակներից ու կանխատեսված արդյունքներից բխած մեթոդների ճիշտ ընտրության և կիրառության կարողությունը: Ճիշտ է՝ ուսուցիչը ազատ է հնարների ընտրության ու կիրառության հարցում, սակայն այդ ընտրությունը չի կարող կամայական բնույթ կրել: Ստեղծված հնարները նախատեսված են դասի տարբեր փուլերում (խթանման, իմաստի ընկալման և կշռադատման) կիրառելու համար: Այս հնարների անտեղի օգտագործումը կխոչընդոտի ուսուցման գործընթացի հաջող իրականացմանը: Իսկ որոշ հնարների կիրառությունը դժվար կլինի, եթե աշակերտները չտիրապետեն լավ կարդալու տեխնիկային: Օրինակ՝ «Խճանկար» (Ձիգսո) հնարը: Նախ աշակերտն առաջին խմբում պարտավոր է սովորել նոր նյութը, ապա սովորեցնել մյուս խմբի ընկերներին, եթե նա ընթերցողական հմտություններ չունի, ապա չի կարողանա կատարել տվյալ հանձնարարությանը:

6. Մայրենիի դասերին գերիշխող տեխնոլոգիան աշակերտների ընթերցողական ճիշտ գործունեության կազմակերպումն է: Հիշյալ տեխնոլոգիան իր մեջ ներառում է տեքստի շուրջ աշխատանքի երեք փուլ:

I փուլ՝ աշխատանք տեքստի շուրջ մինչ ընթերցումը

1. Կանխագուշակում, ընթերցվող նյութի բովանդակության կռահում, երբ որոշվում են տեքստի բովանդակային, թեմատիկ, հուզական ուղղվածությունը, գործող անձինք՝ ըստ վերնագրի, հեղինակի անունը, տեքստի նկարագարդման վերաբերյալ ենթադրությունները:

2. Դասի նպատակների որոշում՝ առաջնորդվելով այն հանգամանքով, թե երեխաները որքանով են պատրաստ աշխատանքին՝ ուսումնական, դրդապատ-ճառային, հուզական, հոգեբանական առումներով:

II փուլ՝ աշխատանք տեքստի շուրջ կարդալու ընթացքում

1. Տեքստի սկզբնական ընթերցում: Պայմանավորված տեքստի առանձնահատկություններով, աշակերտների տարիքային և անհատական հնարավորություններով՝ գործադրելի են կարդալու տարբեր ձևեր՝ ինքնուրույն լուռ ընթերցանություն, ընթերցանություն-ունկնդրում կամ համակցված ընթերցանություն (ուսուցչի հայեցողությամբ): Սկզբնական ընկալման որոշում՝ զրույցի, առաջին տպավորությունների ճշտգրտման միջոցով: Ընթերցած տեքստի բովանդակության և աշակերտների նախնական կանխագուշակումների, հուզական

տպավորությունների համապատասխանության բացահայտում:

2. Տեքստի դանդաղ, խորհելով վերընթերցում (ամբողջական կամ հատվածաբար): Տեքսաի վերլուծություն (հնարներ՝ զրույց հեղինակի հետ, մեկնողական ընթերցանություն, զրույց կարդացածի շուրջ, հենակետային բառերի առանձնացում և այլն): Բովանդակային իմաստով ամբողջություն ներկայացնող հատվածների վերաբերյալ որոշակիացնող հարցերի առաջադրում:

3. Զրույց տեքստի ամբողջական բովանդակության շուրջ կարդացածի ամփոփում:: Ամփոփիչ բնույթի հարցերի առաջադրում՝ անհրաժեշտության դեպքում հիմնավորելու նպատակով հղումներ կատարելով առանձին հատվածների Արտահայտիչ ընթերցանություն:

Ա փուլ՝ կարդալուց հետո աշխատանք տեքստի շուրջ

1. Զրույց տեքստի բովանդակության շուրջ: Կարդացածի քննարկում, բանավեճ: Նյութի բովանդակության վերարտադրման տարբերությունների (մեկնություններ, գնահատականներ) համադրում հեղինակի դիրքորոշման հետ: Տեքստի հիմնական գաղափարի վերհանում և ձևակերպում:

2.Ծանոթություն հեղինակի հետ: Զրույց հեղինակի անձի և նրա ստեղծագործությունների մասին: Աշխատանք դասագրքի և լրացուցիչ նյութերի հետ:

3.Աշխատանք վերնագրի և նկարազարդման շուրջ: Վերնագրի իմաստի քննարկում: Տեքստի բովանդակության վերաբերյալ նկարների ցուցադրություն: Նկարչի և ընթերցողի պատկերացումների համադրում:

4.Ստեղծագործական առաջադրանքներ: Բազմաբնույթ աշխատանքներ՝

աշակերտների ընթերցողական գործունեության տարբեր ոլորտների կապակցությամբ (հուզական, երևակայական, բովանդակության ընկալման, գեղարվեստական և այլն):

7. Համատեղ ընթերցանություն

Առաջին ընթերցում

- <u>Ընթերցումից առաջ.</u> Ներկայացրեք գիրքը: Ուշադրության դարձրեք վերանգրին, հեղինակին և նկարազարդողին, կազմի վրայի նկարին: Կանխատեսումներ արեք, ցույց տվեք նկարները:
- <u>Ընթերցման ընթացրում.</u> Կարդացեք տեքստը, ցույց տվեք բառերը, մտածեք բարձրաձայն, կատարեք կանխատեսումներ, կարդացեք եւ հաստատեք: Կարդացեք խմբով եւ արձագանքելով: Դադար տվեք մեկնաբանությունների համար:
- <u>Ընթերցումից հետո.</u> Կրկնեք նյութը և խորացեք նյութի մեջ: Կրկնեք իրենց

մեկնաբանությունները և կանխատեսումները:

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

- <u>Ընթերցման ընթացքում.</u> Նորից կարդացեք գիրքը, կարդացեք խմբով և այւծագանքելով, մտածեք բարձրաձայն: Ցուցադրեք հասկացությունը: Խնդրեք, որ մեկնաբանեն:
- <u>Ընթերցումից հետո.</u> Կրկնեք նյութը եւ խորացեք նյութի մեջ: Նախադասաւությունների շերտերը դասավորեք ըստ հերթականության: Բառերի քարտերը համապատասխանեցրեք էջի բառերին: Ստեղծեք բառապատ: Դերախաղի միջոցով ներկայացրեք տեքստը: Գրեք կամ նկարեք որևէ պատասխան:

Ստորև ներկայացնում ենք մայրենիի դասեր

Մայրենի

Դասսի թեման՝ Պատմվածքն ընթերցող է փնտրում

Համատեղ ընթերցանություն

Դասի նպատակը՝ Մեկ անգամ ևս հիշեցնել աշակերտներին գրել-կարդալու անհրաժեշտության մասին:

Դասի ընթացքը՝ Ուսուցողական, դաստիարակչական, զարգացնող

Դասարանը հավաքել մեծադիր գրքի մոտ, որ կարողանան իրենք կարդալ: Ընթերցումից առաջ ներկայացնել մեծադիր գիրքը: Գիրքը ունի վերնագիր: Վերնագիրը գրքի անունն է և այն պատկերացում է տալիս թե ինչի մասին է գիրքը: «Կարող էք ասել թե ի՞նչ է հուշում վերնագիրը գրքի բովանդակության մասին»: Երեխաները հայտնեցին տարեբեր կարծիքներ: Այս գրքի հեղինակն է Ռեյն Ռուադը: Ցուցադրեցի կազմի վրայի նկարը: Կանխատեսումներ արվեց գրքում եղած նկարների վերաբերյալ: Գրքի ներկայացումը շատ գրավիչ ստացվեց: Երեխաների հետաքրքրությունը մեծացավ պատմվածքի նկատմամբ: Ընթերցումից առաջ սկսեցի գրքի նախնական քննարկումը, այսինքն խոսեցի այն նյութի շուրջ, որը նրանք շուտով լսելու են: Թե որքան անհրաժեշտ է գրել և կարդալ իմանալը: Մեկ անգամ ևս անդրադարձանք հայոց գրերի գյուտին, որ 2005թ.-ին լրացավ հայոց գրերի գյուտի 1600-ամյակը: Խոսեցինք մեր մեծ ուսուցիչ Մեսրոպ Մաշտոցի մասին: Բացատրեցի թե ինչ է պատմվածքը (գրավոր փոքրիկ պատմություն, զրույց որևէ դեպքի մասին): Ընթերցման ընթացքը՝

Հետո կարդացի տեքստը բարձրաձայն և հաճույքով՝ ձեռքս սահեցնելով բառերի և արտահայտությունների տակով: Կարդացի աշխույժ ձայնով՝ միջին արագությամբ, իսկ աշակերտները աչքերով հետևում էին ինձ: Կարդալու ընթացքում դադար տրվեց մեկնաբանելով տեքստը, ինչպես նաև խնդրեցի աշակերտներին տեքստի վերաբերյալ կանխատեսումներ անել նախքան էջը շրջելը: Երբ էջը շրջեցի և կարդացի հաջորդ միտքը, պարզվեց թե ում կանխատեումն էր ճիշտ: Ընթերցանության ավարտից հետո աշակերտներին հարցրեցի, թե ինչ զգացողություններ ունեցան:

Երկրորդ ընթերցում՝ Ընթերցման ընթացքում տեքստի առաջին էջը կարդացինք հերթականությամբ մեկ ես, մեկ աշակերտները: Երկրորդ էջը կարդացինք խմբով: Երրորդ էջը «արձագանքով», այսինքն մի տող ես կարդացի, հետո աշակերտները կարդացին նույն տողը, իսկ ես մատնացույց էի անում բառերը: Կարդալիս աշակերտները համապատասխան շարժումներ էին անում (ժեստ, դիմախաղ): Այդ իսկ պատճառով արժանացան իմ խրախուսանքին: Երկրորդ ընթերցումից հետո աշակերտներին տրվեց հարցեր տեքստի վերաբերյալ: Տեքստից դուրս էի հանել 5 նախադասություն և գրել էի թղթերի վրա: Աշակերտներին հանձնարարեցի այդ նախադասությունները ըստ հերթականության դասավորել պաստառի վրա: Տեքստը բաց վիճակում թողեցի դասարանում, որ երեխաները կարողանան այն ինքնուրույն կարդալ:

Պատմվածքն ընթերցող էր փնտրում

I էջ

Լինում է, չի լինում՝ մի Պատմվածք է լինում: Պատմվածքն ընթերցող է փնտրում, որն իրեն կարողանա կարդալ: Գնում է անտառ: Հանդիպում է Նապաստակին:

-Նապաստա՜կ, Նապաստա՜կ, դու կարդալ գիտե՞ս,- հարցնում է Պատմվածքը:

Գիտե՜մ,- վախեցած պատասխանում է Նապաստակը:

Որ գիտես, կարդա՜ ինձ,- խնդրում է Պատմվածքը:

դադար

Հարց- Նապաստակն ինչո՞ւ վախեցած պատասխանեց Պատմվածքի հարցին:

II էջ

Չէ՜, չեմ կարդա: Ես այսօր լավ չեմ կարողանում կարդալ,- ասում է Նապաստակը:

Պատմվածքն առաջ է գնում: Հանդիպում է Աղվեսին:

Աղվե՜ս, Աղվե՜ս,- ասում է Պատմվածքը,- դու կարդալ գիտե՞ս:

Իհա՜րկե, գիտեմ,- խորամանկ ժպտալով պատասխանում է Աղվեսը:

դադար

Հարց- Ի՞նչ ես կարծում Աղվեսը կարդալ գիտե՞ր:

III էջ

Ի՞նչ կլինի, կարդա՜ ինձ,- խնդրում է Պատմվածքը:

Չէ՜, չեմ կարդա: Ակնոցս մոռացել եմ հավաբնում,- ասում է Աղվեսը:

Պատմվածքը առաջ է գնում: Հանդիպում է երկրորդ դասարանցի Արային: «Գուցե վերջապես բախտս բերի»,- մտածում է Պատմվածքն ու դիմում նրան

- Դու կարդալ գիտե՞ս, փոքրի՜կ.

դադար

- Հարց- Ի՞՜նչ է պատասխանում Արան:

- IV էջ

- Այո՜, գիտեմ,- պատասխանում է Արան:
- Կարդա՜ ինձ,- խնդրում է Պատմվածքը:
- Եվ խելացի Արան առանց դժվարության կարդում է.
- Լինում է, չի լինում՝ մի Պատմավածք է լինում...
-
- Վերընթերցել տեքստը մի քանի անգամ և խրախուսել աշակերտներին նույնը կրկնել: Այնուհետև տալ հարցեր տեքստի վերաբերյալ:
- Պատմվածքն ինչո՞ւ էր ընթերցող փնտրում:
- Ինչո՞ւ կենդանիները չկարդացին Պատմվածքը, իսկ Արան կարդաց:
- Պատմի՜ր՝ ինչ կլիներ, եթե մարդիկ կարդալ չիմանային:
- Եթե հանդիպեիր Պատմվածքին, ի՞նչ կասեիր նրան:

Մայրենի

Դասսի թեման՝ «Փոքրիկ պատուհան դեպի մեծ աշխարհ» թեմայի մուտքի զրույց «Հարստություն» բանաստեղծությունը

Համատեղ ընթերցանություն

Դասի նպատակը՝ Ձևավորել ընթերցասիրություն, հարգանք գրքի նկատմամբ

Դասի ընթացքը՝ Ուսուցչուհին ընթերցեց թեմատիկ խմբի խորագիրը և աշակերտների ուշադրությունը հրավիրեց նկարազարդման վրա: Կիրառեց ԽՀԿ համակարգը:

Խթանում

Աշխատանք թեմատիկ խմբի վերնագրի և նկարագրման շուրջ.

«Ի՞նչ եք կարծում, ովքեր են լինելու այս թեմատիկ խմբում ուսումնասիրվող տեքստերի բովանդակությանը»:

Աշակերտները պատասխանեցին հարցերին:

Իմաստի ընկալում

Մինչ բանաստեղծության ընթերցումը կատարվեց աշխատանք վերնագրի շուրջ.

«Ի՞նչ է հարստությունը ըստ ձեզ»

«Ի՞նչ կարող է մեզ պատմել գիրքը: Արդյո՞ք գիրքը միշտ եղել է այդպիսին, ինչպիսին մենք այն գիտենք հիմա: Եկե՛ք ճանապարհորդենք անցյալով, որպեսզի իմանանք, թե ինչպիսին է եղել առաջին գիրքը»:

Այնուհետև ուսուցիչը ընթերցեց բանաստեղծությունը: Քառատող առ քառատող բացատրվեց իմաստը, բառերը, արտահայտությունները: Կատարվեց զրույց բանաստեղծության բովանդակության շուրջ՝

. Ինչու՞ է հեղինակը գիրքը համարում հարստություն

. Ի՞նչ են սովորեցրել գրքերը

. Ի՞նչ նոր գիտելիքներ ձեռք բերեցիք…

Կշռադատման փուլ

Այս փուլում կատարվեց անդրադարձ, ամփոփում

Վերաբերմունքի ճշգրտում հարցերի միջոցով

. Ի՞նչ սովորեցի…

. Ի՞նչ հասկացա…

. Ի՞նչ մտացեցի…

«Շարունակի՛ր քո ընկերությունը գրքի հետ և այդ պատուհանից նայելով աշխարհին՝ ավելի ու ավելի կհարստանաս»:

Եզրակացություն

Ընթերցանությունը գիտելիքների ձեռք բերման, բազմակողմանի զարգացման, բառապաշարի հարստացման հիմնական աղբյուր է: Կարդալու միջոցով հարստանամ ու զարգանաում են աշակերտների երևակայությունը, հոգեկան ներաշխարհը, խոսքը, ճաշակը: Այն նաև օգնում է մարդուն ուրիշների գործունեության ուսումնասիրման ճանապարհով ճանաչել կյանքը, հասկանալ նրա խորհուրդները և սովորել ուրիշի սխալների վրա: Հենց այս է պատճառը, որ մանկավարժներն ու մեթոդիստներն ամեն ինչ անում են սերունդների մեջ ընթերցողական կարողությունների մշակման, ընթերցասիրության դաստիարակության համար: Այս կարևոր խնդրի լուծման ճանապարհին հիմնականը կարդալու հմտությունների զարգացումն է: Դրա շնորհիվ աշակերտը հաղորդակից է դառնում մայրենի լեզվի հարստություններին և ձեռք է բերում գրքերի աշխարհը թափանցելու բանալին:

Ընթերցանության հիմնախնդիրը միշտ էլ արդիական է եղել: Այն հուզել և հուզում է բազմաթիվ մասնագետների (ոչ միայն հայ, այլև արտասահմանյան):

Մանկավարժական գրականության մեջ նշվում է. «Կարդալ չսիրող, գրքի, հեքիաթի, պատմվածքի ունկնդրման և ընթերցման նկատմամբ ի սկզբանե անտարբեր երեխաներ չեն լինում: Պարզապես անհրաժեշտ է մանկական ընթերցանության մանկավարժորեն ճիշտ և նպատակային կազմակերպում»:

Մեր ոաումնասիրություններից և սովորողների հետ հարցազրույցից եկել ենք այն եզրակացության, որ բազմաթի աշակերտներ շատ են ցանկանամ կարդալ, բայց հանդիպելով կարդալու տարաբնույթ խոչընդոտներին՝ անմիջապես նահանջում են:

Որպեսզի երեխան սիրի գիրքը և կարդա, պետք է ուսոցիչը (հատկապես տարրական դասարանների) լավ կարդալ սովորեցնի աշակերտներին ու օգնի նրանց հաղթահարելու կարդալու ընթացքում առաջացած դժվարությունները:

Այսպիսով՝ ընթերցանության դասը ոչ միայն պետք է գիտելիքներ տա աշակերտներին, այլև խթանի նրանց ինքնուրույն մտավոր գործողությունը, ոչ միայն պետք է նոր գիտելիքներով ու տեղեկություններով հարստացնի նրանց տրամաբանական մտածողությունը և ինքնագործունեությունը:

Մարդուն տվեք ընթերցանության նկատմամբ սեր
և այն բավարարելու միջոցներ, ու հազիվ թե ձեզ
չհաջողվի նրան դարձնել երջանիկ:

Զոն Գերշել

Օգտագործված գրականության ցանկ

Վ. Գյուլազյան և ուրիշներ- «Ուսուցչի ուղեցույց և տետր» Երևան Զանգակ-97 2009թ

Կ. Չիբուխչյան, Կ. Թորոսյան - «Մեթոդական աշխատանքը դպրոցում» Զանգակ-2014թ

Ա. Հովհաննիսյան և ուրիշներ - «Համագործակցողին ուսուցում» Երևան Անտարես-2006թ

Ս. Սարուխանյան և ուրիշներ - « Ուսուցման ժամանակից մեթոդներ, հնարներ, վարժություններ» Վանաձոր-2008թ.

Ա.Ե.Տեր-Գրիգորյան «Հայոց լեզվի մեթոդիկա» «Լույս» հրատարակչություն Երևան-1980